ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ԳԱԳԻԿ ԾԱՌՈՒԿՅԱՆԻՆ «Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱՋԱՏ ՋԱՒԱԿՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ԳԱԳԻԿ ԾԱՌՈՒԿԵԱՆ

Համազգային մեր նուիրական սրբավայր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր ողջոյնն ու բարեմաղթանքներն ենք բերում Ձեզ մեր ժողովրդին մատուցած Ձեր բազում ծառայութիւնների եւ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու հանդէպ տածած Ձեր անկեղծ սիրոյ ու նուիրումի համար:

Յարգարժան պրն Ծառուկեան, մեր ժողովուրդը ճանաչում էր Ձեզ իբրեւ անուանի մարզիկի, ով իր յաջողութիւններով միջազգային ասպարէզներում բարձր է պահել մեր երկրի անունը: Այսօր Դուք ճանաչուած էք նաև որպէս գործարար ու բարեգործ հայորդի, որի սէրը հանդէպ հայրենի երկիրը, հարազատ ժողովուրդն ու Մայր Եկեղեցին դրսեւորուում է բազում հայրենաշէն նախաձեռնութիւններով ու ասպուածահաճոյ գործերով՝ յանուն ազգային հասարակական մեր կեանքի շինութեան ու անկախ մեր երկրի առաջընթացի:

Մենք ուրախութեամբ ենք ականատես նաեւ Ձեր որդիական սիրուն ու ծառայասիրական պատրաստակամութեանը՝ հանդէպ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը: Առ Աստուած Ձեր հաւատի եւ դէպի հարազատ ժողովուրդը Ձեր անկեղծ նուիրումի արտայայտութիւնն է Ձեր հովանաւորութեամբ կա-

ռուցուած Սուրբ Աստուածածին եկեղեցին, որի օծման սրբազան արարողութիւնը կատարեցինք Ձեր եւ մեր ժողովրդի հաւատաւոր զաւակների մասնակցութեամբ ու աղօթքներով: Այս սրբավայրը, որպէս տուն Աստուծոյ եւ տուն աղօթից, դարեր շարունակ իր շնորհաբաշխ դռները պիտի բացի հաւատաւոր մեր զաւակների առջեւ՝ Աստուածային օրհնութիւն սփռելով նուիրական մեր հողին:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից յղում ենք Ձեզ Հայրապետական Մեր օրհնութիւնը եւ Ձեր ծառայութեանց ու վաստակի ամենաբարձր գնահատանքով շնորհում Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

պատուոյ բարձրագոյն շքանշանը:

Ի խորոց սրտի Մեր աղօթքն է, որ Ամենախնամն Աստուած հաւատի մեր հայր Սուրբ Գրիգոր Լուսաւորչի բարեխօսութեամբ Իր օրհնութեան ներքոյ պահի ու պահպանի Ձեզ՝ պարգևելով քաջառողջ երկար կեանք, գործոց յարաւորոգ յաջողութիւններ և ամենայն բարիք:

Թող Ձեր յարկը շնորհընկալը լինի երկնապարգև բիւր բարիքների եւ առատ ողորմութեան:

«Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ընդ ձեզ եւ ամենեսեան. ամէն»:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 1-ն Յունիսի
յամի Տեառն 2002 եւ ի թուին հայոց ՌՆԾԱ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 90